ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 35

10 հունիսի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0101-0044 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 10.45565 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 31-Ա հրամանով «Խարկով Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետև՝ ընկերություն) տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 04.02.2019 թվականի ՇԱԹ-29/597 թույլտվությունը, 04.02.2019 թվականի N Լ-597 լեռնհատկացման ակտում և ընդերքօգտագործման 04.02.2019 թվականի N Պ-597 պայմանագիրը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 26-ի թիվ 51 դրական եզրակացությունը և

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 11-ի թիվ 49-Ա որոշումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-022-0101-0044 կադաստրային ծածկագրով 10.45565 հեկտար հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29012020-08-0064) տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով 44 տարի ժամկետով (մինչև՝ 2064 թվականի փետրվարի 4-ը), 261 400 (երկու հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «Խարկով Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ ընկերության միջոցներով:

3. Հողամասի վկայականը կցվում է որոշմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ - 10 Դեմ՝ -0 Չեռնպահ՝ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ			
ԱՐՍԵՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ			
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ			

ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ	----------	----------	----------
ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ	----------	----------	----------
ՆԱՋԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ	----------	----------	----------
ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ	----------	----------	----------
ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ	----------	----------	----------
ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ	----------	----------	----------
ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ	----------	----------	----------
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ	----------	----------	----------
ՍԱՐԳՍՅԱՆ ՋԱՎԵՆ	----------	----------	----------
ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի հունիսի 10
Քաղաք Մարալիկ